

NEUERSCHIENENE BÜCHER

(dankend erhalten)

Sarkissian Robert, Directors annual Report, 1981. Beirut, 1982, p. 38. Howard Karagehusian commemorative corporation. Statistical Statements, 1981, p. 30. Financial Statements, p. 6.

Salvator Lilli, Ein neuer Seliger der Kustodie des Heiligen Landes. In Im Land des Herrn, 36. Jahrgang 1982, Wien 1982, p. 109—118.

Samuelian Thomas J., Classical Armenian Culture. University of Pennsylvania, Armenian Texts and Studies 4. U.S.A. 1982. p. IX+223.

Sarafian Kevork A., History of Education in Armenia. La Verne, Calif. 1978, p. 356.

Sarian Martiros, Aquarelles et dessins. Leningrad 1974, Ed. Aurora, pp. 4+24 pl.

Sarian Robert, The American tourist Guide to Europe. Fort Lauderdale, 1982, p. 292.

Saroyan William, Chance Meetings. New York, W. W. Norton & Company. Inc. 1978, p. 135.

—Obituaries. Berkeley, Creative Arts Book Company, 1979, p. 354.

Sauver ce qui peut encore être sauvé... Les monuments arméniens de Turquie. Dossier présenté au congrès national des clubs UNESCO — Session 1980. Lyon, Imprimerie Inquarto, 1980, p. 48.

Schenkowitz Gisela, Armenische Märchen, Herausgegeben von Isidor Levin in Verbindung mit Uku Masing, übersetzt von Gisela Schenkowitz. Passau 1982, S. 383+5.

Schmitt Rüdiger, Grammatik des Klassisch-Armenischen. Innsbruck, 1981, S. 253+2.

Shahnour Shahan, Retreat without song. Edited and translated by Mischa Kudian. London, Mashtots Press, 1982, p. 156.

Shatberdskii Sbornik, X veka. B. K. Gigineshwili i Z. A. Giunashvili. Tbilisi, izdat. Mezniereba, 1979, S. 428.

Siegert Folker, Drei hellenistisch-jüdische Predigten. Wissenschaftliche Untersuchungen zum Neuen Testament 20. Tübingen, J. C. B. Mohr, 1980, S. 112.

Sovremennaja Skulptura Armenii. Moskva, 1975, S. 20.

Takvorian Takvor, Armenouch. Roman. Ophrys, 1981, p. 341.

Tarbassian A. Hratch, Erzurum (Garin) its Armenian History and Traditions. Translated from the Armenian by Nigol Schahgaldian. Published by the Garin Com-patriotic Union of the United States 1975, p. V+270.

Tashjian James H., Turkey: Author of Genocide, the centenary Record of Turkey, 1822—1922. Boston, 1965, p. 32.

Tigranoff Nikolaus, Die persische Muchgamen und Diasgiaen. Novrus-Arabi (Op. 10). Alexandrapol, p. 7.

— Baiathi-Kurd (Op. 2), Baiathi-Schiraz (Op. 3), Heidari (Op. 5), Schahnaz (Op. 6), Tscharghiah (Op. 8). Nava (Op. 11), Novrus Arabi (Op. 107), Izdanie Avtora, Leningrad, 1928, p. 15.

— Heidari Op. 5, 2te Ausgabe. Alexandrapol, p. 7.

The Future of the Oriental Catholic Churches. Edited by John Madey and Stanislaus Thomas Erackel. Santinilayam Publ. Tiruvalla, India, Copyright 1979, p. 273.

Tootikian Vahan H., The Armenian Evangelical Church. Detroit 1982, pp. 322.

Toriguian Shavarsh, The Armenian Question and International Law. Beirut, Hamaskaine Press, 1973, p. 330.

Totovents Vahan, Scenes from an Armenian Childhood. Translated Misha Kudian. London, Mashtots Press. 1980, p. 182.

Toumanian Hovhannes, The Master and the Labourer, Mazar the brave. Edited by Brian Bean. Moscow, Sovetakan Grogh, 1979, p. 32.

Vahramian Herman, Ermakov, Armenia 1910. Testo di Mario Verdone, con la collaborazione dell'Istituto di Scienze dello Spettacolo della Musica e della Comunicazione dell'Università di Roma. Venezia 1982, p. 176.

Varjabedian Sisag Hagop, The Armenians. Chicago, 1977, p. 194.

Vasken I., Messages & Addresses. New York, 1968, p. 80.

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Թ Ի Ի 1-6

Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր - Յ Ո Ւ Ն Ի Ս

Ղ Է . Տ Ա Ր Ի 1983

ՓՇՐԱՆՔՆԵՐ ԵՒԹԱՂԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱԳՈՅՆ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Երկարատև տարակարծութիւններն ու բանավէճերը Եւթաղի և նրա մատենադրական ժառանգութեան վերաբերեալ գոյացրել են պատմա-բանասիրական, բնագրադիտական բաւական ընդարձակ դրականութիւն: Ընդհանուր պատկերացում տալու նպատակով համառօտիւ ուրուագծենք այդ դրականութեան անցած աւելի քան երկու հարիւրամեայ ուղին ըստ Հ. Ա. Վարդանեանի՝ Եւթաղի երկերի հայերէն թարգմանութեան քննական բնագրին կցած մեծարժէք ուսումնասիրութեան տուեալները¹:

Առաջինը 1698 թ. եւթաղեան երկերը շրջանառութեան մէջ դնող Zacagni-ին անդրադարձաւ Եւթաղին ու նրա մատենադրական ժառանգութեանը: Ըստ հետազօտողի, Եւթաղը, տակաւին Ալեքսանդրիայի Սարկաւազ, մի անձանօթ Հօր խնդրանքով 458 թ. հարկադրուեց «ընդ նեղ եւ ընդ նուրբ ծերայ պատմութեան դանձն ի ներքս արկանել» գրելու «գլխաւարան Պաղոսի» վերածելու դանոնք տներու (στίχοι), տալու անոնց համառօտ բովանդակութիւնն ու պատրաստելու Պօղոսի ժամանակագրութեան նուիրուած հակաճառութիւն մը՝ անուամբ Եւսերեայ Քրոնիկոն կանոններէն: 490-ին դեռ կենդանի և արդէն եպիսկոպոս Սուղկեայ... ձեռնարկեց միևնոյն յօրինուածով օժտել նաև Գործք Առաքելոցն ու Կաթողիկէ Թղթերը և ընծայեց զանոնք «եղբայր Աթանասի» «որ էր երկրորդ արքեպիսկոպոս Աղեքսանդրիոյ...» (էջ 1—2): Եւթաղի անձի և թողած մատենադրական ժառանգութեան վերաբերեալ այս տեսակէտը

իշխող էր մինչև 1889—91 թթ., երբ Mill-ի, Omont-ի և Ehrhard-ի ուսումնասիրութիւնները եկան փոխելու իրերի վիճակը: Հիմնուելով Omont-ի հետազօտութեան վրայ՝ Ehrhard-ը դալիս է այն եղբակացութեան, որ եւթաղեան երկեր պարունակող յունարէն ձեռագրերից մէկի յիշատակարանի հեղինակային աղաւաղուած անունը ոչ թէ Եւթաղ է, այլ Եւազր: Այսպիսով ըստ Ehrhard-ի, եւթաղեան երկերի հեղինակը Եւազր Պոնտացին էր, որով ճշտուած էր նաև աշխատութիւնների ստեղծման մօտաւոր ժամանակը՝ 390-ական թուականներ: Այս տեսակէտն իր հետեւեալ բացատրութիւնն էր դանում. լինելով արդէն աղանդաւորական դիտուող Որոգինէսի հետեւորդը՝ Եւազր Պոնտացին հեղինակային իր անունը փոխարինել է Եւթաղ «անվիտա» անուամբ, որպէսզի երկասիրութիւններն զերծ մնան ոչնչացումից: Նուազ հնարաւոր է նաև, որ Եւազր-ը շրջանառութեամբ ընթերցուած լինի Եւթաղ և այսպիսով տեղի տուած լինի նման շփոթի: Ehrhard-ի այսօրինակ մեկնաբանութիւններն ու «հիմնաւորումները» հիմնիվեր ժխտուեցին Dobschütz-ի կողմից: Վերջինս ապացուցում է Եւթաղի անձի և նրա անուամբ յայտնի երկերի նրան իսկ պատկանելը:

Պակաս կարևոր էր նաև Եւթաղի կեանքի ու նրա հեղինակած երկերի ժամանակային սահմանազօծի ճշտորոշման հարցը: Soden-ը հիմնուելով ոմն Եւթաղ եպիսկոպոսի հեղինակած հաւատոյ հանդանակի է դարի երկրորդ կէսին գրուած լինելու իրողութեան վրայ՝ կարծում է, թէ այստեղ յիշատակուած Եւթաղ Սուղկեային նոյն Եւթաղն է, որ ապրել է է գարուած: Սակայն «գրեթէ

¹ «Մատենագրութիւնք Եւթաղի», Վիեննա, 1930: Այստեղից բերուած էջահամարները կնշուեն յընթացս շարադրանքի:

233-84

Ջախճախիչ» դիտուող այս նոյնացումը Conybeare-ի, Robinson-ի և Zahn-ի 1904—5 թթ. հրատարակած շահեկան ուսումնասիրութիւններով հերքուեց: Սրանց մէջ վերջնականապէս ապացուցուեց, որ Եւթալի իրապէս 396 թուականից առաջ է խմբագրել աստուածաշնչեան իր երկասիրութիւնները, որ, ծնունդով հաւանաբար Ասորիքից, Դ դարի հեղինակ Եւթալին ու է դարի մատենագիր Եւթալի եպիսկոպոս Սուղկեցին (Սարգիսիա) տարբեր անձնաւորութիւններ են, որ Դ դարի հեղինակ Եւթալի երկերը արդէն Ե դարում թարգմանուել են հայերէն իսկ Զ դարի սկզբին՝ ասորերէն:

Եւթալի անձնաւորութեան և նրա երկերի երևան դալու ժամանակի ճշտորոշման մէջ խիստ կարևոր ու դնահատելի իր նպաստը բերեց Conybeare-ը «On the Codex Paphlami and the Date of Euthalius» խորագրով ուսումնասիրութեամբ (Journal of Philology, t. XXIII, p. 241—259, հայ. համառոտ թրգմ.՝ «Բազմավէպ», 1895, էջ 209—12, 260—63): Նա հայերէն ձեռագրերի ընձեռած տուեալներով ապացուցում է, որ Եւթալը 396 թ. ընտրելով Սուրբ Գրքի Կեսարեան բնագիրը՝ այն օժտում է առաջաբաններով, վկայութիւններով և դրուխների բովանդակութեամբ: Պօղոս առաքեալի թղթերը հայերէն թարգմանելիս Ե դարի թարգմանիչները նախընտրում են այն բնագիրը, «գոր մենք կրնանք եւթաղեան նոր հրատարակութիւն անուանել, որ կը բովանդակէր Պամփիլեան (իմա՝ Կեսարեան — Շ. Ք.) բնագիրը» (էջ 8): Եւթալի հեղինակութիւնը փաստող կարևոր երկ է հայերէն նոր Կտակարանի «գրեթէ բոլոր ձեռագրերում» առկայ «Աղերսը», որ Եւթալ «բացորոշ անունն» է կրում (էջ 9): «Կայսերաց գիրքը», որ ըստ Հ. Բ. Սարգիսեանի, հաւանաբար Զենոն կամ Անաստաս կայսեր օրօք է գրուել, հաղորդում է. «Արկաղիոս եւ Ոնորիոս, որդիք Թէոդոսի Մեծի, ամս քսան եւ չորս: Ի սոցա երկրորդ ամին եղեւ Եւթալ Աղեքսանդրացի, որ հրաշագան յօրինուածովք զտուրբ առաքելոյն Պաւղոսի եւ զԳործոց Առաքելոյն եւ զԵւթանացունց թղթոյն Կաթողիկէսաց զառաջարանս և զԳլուխս և զմանաւորս և զվկայութիւնս և զտունս կարգեաց, յաղաղս հերձուածոյն, որ էին Կազ(ար)բոսի և Կարպոկրատեայ, Կոթորոսի և Եկղորոսի, որ սոսկ մարդ ասէին զՔրիստոս» (էջ 10, նաև «Բազմավէպ», 1877,

էջ 205 հմմտ. Μεσροπὺς Τερῶ-Μοῦσῆσαν, Ιστορία Περὸς τὴν Βίβλιον ἐν Ἀρμενικῷ γλώσσῃ. Σ.-Πετὲρβουρῆ, 1902, σ. 95—96).

Հայ մատենագիրները նմանապէս իրենց նկատառելի նպաստն են բերում Եւթալի անձնաւորութեան ու հեղինակային իրաւունքների վերականգնման յոյժ կարևոր խնդրին: Ժամանակով առաջինը Անանիա Շիրակացին է, որ իր «Ժամանակագրութեան» մէջ տուեալներ է հաղորդում Եւթալի երկասիրութիւնների մասին: Այս պարագան վկայում է, որ հայ աւանդութիւնը արդէն է դարից սկսեալ հէնց Եւթալին է խնդրոյ առարկայ երկերի հեղինակ ճանաչում: Այնուհետեւ նրա մասին վկայութիւններ կան Ասողիկի, Մխիթար Այրիվանեցու Պատմութիւններում, Գրիգոր Աբասեանի «Պատճառաց զբնութ», Յովհան Որոտնեցու, Մատթէոս Զուղայեցու մեկնողական երկերում, ինչպէս նաև՝ Վենետիկի Մխիթարեան մատենադարանի No. 6 ձեռագրում գետեղուած Գործք Առաքելոցի մի անանուն նախադրութեան մէջ (էջ 11—12):

Արդ երբ են թարգմանուել եւթաղեան երկերը: Ինչպէս յայտնի է Ե դարում Եւսեբիոս Կեսարացու Աւետարանաց Համարարանի, Կարպիանոսին յղած թղթի հետ միասին յունարէնից հայերէն թարգմանուեցին նաև Եւթալի երկերը՝ 1892 թ. Էլմիածնի Մատենադարանում Conybeare-ը զտաւ մի պահպանակ, որը պարունակում էր հատուած Պօղոս առաքեալի թղթոց՝ Եւթալի գրած Առաջաբանից ու Վկայութիւնից: Այստեղ առկայ թուական տուեալների հիման վրայ զիտնականը եկաւ այն եզրակացութեան, որ Եւթաղեան բնագրերը հայերէն են թարգմանուել 448 թ. (էջ 14):

Բնագրի հայերէն թարգմանութեան վաղեմութիւնը յայտանշող կարևոր իրողութիւն է նաև նրա լեզուն: Եւթալի երկերն ամենայն իրաւամբ գետեղուել են Ոսկեդարեան մատենագրութեան չորրորդ դասի մէջ, որի յատկանշանական նկարագիրն է «մեղմ, հանդարտ եւ քաղցրախօս եւ կանոնաւոր քան

² Ի դէպ. վկայակոչելով Goussen-ին («Oriens Christianus», 1906, s. 314)՝ Հ. Ա. Վարդանեանը հետևեալ կարծիքն է յայտնում. «Եւթալի վրացերէն բնագիրները... կ'երևի թէ նոյն իսկ հայերէնէ թարգմանուած և հետևաբար ուղղակի կապակցութեան մէջ են եւթաղեան հայ բնագիրներու հետ» (անդ, էջ 13, ծանօթ. 3):

զերկուս առաջինն (Բիւզանդ և Եփրեմ), սակայն եւ ոչ իրրեւ զառաջինն զայն դաս, յոր Եզնիկն և մեծ մասն մատենագրաց ժամանակին մատենագրեցին» (էջ 14)³:

Ըստ Robinson-ի Եւթալի հարազատ երկերը հետևեալներն են՝

- Ա. Երեք յառաջարանները (Պաւղ. Գործք. Կաթ.)
- Բ. Վկայութեանց ընդարձակ բովանդակութիւնները
- Գ. Գլուխները և Դիր զլիսոց Գործոց Առաքելոց (էջ 24):

Հայ դասական թարգմանութեան լեզուն հնարաւորութիւն է տալիս սակայն եւթաղեան հարազատ երկասիրութիւնները զատորոշելով անհարազատ գործերից՝ ընդարձակել նրա հեղինակային իրաւունքները: Վերոբերեալ անուն գործերից զատ հայ դասական թարգմանութեան լեզուն իր բնորոշ առանձնայատկութիւններով հնարաւոր է դարձնում Եւթալի հարազատ երկեր համարել նաև Robinson-ի և այլոց կողմից անհարազատ զիտուած:

- Ա. «Բովանդակութիւն աստուածեղէն վըկայութեանց»-ի համառոտ տարբերակը,
- Բ. «Յառաջադիրք»-ը,
- Գ. Մանուկը՝ դ միւսուր. ա՝ «Եւ գրեցան յայլ և յայլ քաղաքաց...» բ՝ «Եւ գրեցան ի Պաւղոսի...», գ՝ «Այս էնչ է զիրս...»:
- Դ. «Դիրք զլիսոց»
- Ե. «Յիշատակարան»
- Զ. «Նաւարկութիւն Պաւղոսի Առաքելոյն ի Հռովմ»
- Է. «Ընթացք Պաւղոսի Առաքելոյն»
- Ը. «Աղերս Եւթալի»

* * *

Ձեռագրական մշակոյթի մէջ մասնայատուկ կոչում ունեցող պատառիկ-պահպանակները խիստ կարևոր և հաշուառելի են իրենց բնագրային ու գրչագրական առաւել

³ Ըստ նորայր Բիւզանդացու Եւթալի երկերի թարգմանիչը Կորիւնն է (Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900, էջ 1, 14, 33): Սակայն նորագոյն հետազոտութեան համաձայն եւթաղեան գործերի թարգմանիչը տակաւին անյայտ է. տե՛ս Հ. Ամալեան, Մակարայեցոց գրքի հայերէն թարգմանութեան ժամանակի եւ հեղինակի մասին, «Էլմիածին», 1980, Բ—Գ, էջ 74:

վաղնջական ձեւերի ուսումնասիրմանը նպաստող երկակի արժէքով: Մէկ անգամ չէ, որ նշուել է հայերէն ձեռագրերում պատառիկ-պահպանակների, որպէս նրանց տարասեռ բաղադրամասը կազմող միաւորների հետագոտման ու արժեւորման անհրաժեշտութիւնը:

Որպէս պահպանակներ կցուելով հետագայում ընդօրինակուած ձեռագրի սկիզբին ու վերջին՝ հին կամ հնագոյն ձեռագրերի մագաղաթեայ թերթերը ոչ հազուադէպ իրենց մէջ պարունակում են ուշ ընդօրինակուած բնագրի նկատմամբ առաւել նախընտրելի ընթերցումներ: Եւթալի երկերի ամբողջական ընդօրինակութիւնները ԺԳ/ԺԳ դդ. սահմանագծից այն կողմ չեն անցնում: Հնագոյն ընդօրինակութիւններից փշրանքներ հասել են ԺԱ—ԺԳ դդ.: Սրանց մէջ վաղեմութեամբ առաջինը Վիեննայի Մխիթարեան մատենադարանի No. 456 (Գ 1—2) հատակոտորն է (ԺԱ—ԺԳ դդ.): Այն պարունակում է Բ Կոր. Վերջագիրը և Գաղատ. թղթի դրուխները⁴: Ընդօրինակման վաղեմութեամբ երկրորդը «Բովանդակութիւն ընթերցուածոց»-ից մի հատուած պարունակող Leipzig, Universitäts-Bibliothek No. 1096 մագաղաթեայ թերթն է (ԺԲ—ԺԳ դդ.), որ հրատարակել է Macler-ը⁵: Այս երկու բեկորները Եւթալի քննական հրատարակութեան մէջ ներկայանում են Խ եւ Կ պայմանանիշերով⁶:

Մաշտոցի անուան Մատենադարանի No. No. 1529 (ԺԴ դ.), 1947 ((ԺԷ դ.) 2087 (1358 թ.) ձեռագրերի համար պահպանակ ծառայող եւթաղեան հատակոտորների ներկայ հրատարակումը նպատակ ունի ըստ կարի առաւել ամբողջական դարձնել Եւթալի եր-

⁴ Տե՛ս Ս. Բոլանջեան, Մովսէս Խորենացու նորայայտ երկաթագիր պատառիկն ու Դանիէլեան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը, «Բանբեր Մատենադարանի», 1958, No. 4, էջ 165—166, նոյնի՝ նորայայտ պատառիկներ Կիւրեղ Երուսաղեմացու թղթի մի գրչագրից, անդ, 1960, No. 5, էջ 236—37:

⁵ Հ. Յ. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 928:

⁶ Տե՛ս F. Macler, Notices de manuscrits arméniens vus dans quelques bibliothèques de l'Europe centrale, Paris, 1913.

⁷ Եւթաղեան բնագրերի հայերէն թարգմանութեան «պաղպիւր և ձեռագիր» օրինակների մասին տե՛ս Հ. Ա. Վարդանեան, Եւթալ, աշխ., էջ 66—76:

կերի ջննական բնագրում առկայ ընթերցումները, որոնք, անհրաժեշտութեան պարագային, կարող են ճշգրտուել պահպանակների ընձեռած համեմատարար նախնական կամ ընդունելի ընթերցումներով: Բանն այն է, որ խնդրոյ առարկայ պատառիկ-պահպանակները, որոնք պարունակում են առանձին հատուածներ Եւթաղի «Յառաջարանութիւն Թղթոցն Պաղտի առաքելոյ» աշխատութիւնից, ոչ միայն ժամանակով են կանխում Հ. Ա. Վարդանեանի օգտագործած հատակոտորներին (մէկից երկու դար) և ամբողջական ընդօրինակութիւններին, այլև մասերը լինելով բնագրի (յիշեալ հատակոտորներից տարբեր) այլ հատուածներ, բնագրագրիտական որոշակի հետաքրքրութիւն կարող են ներկայացնել:

Ինչպէս երևում է Եւթաղի հայերէն թարգմանութեան ժամանակ թարգմանիչ Հայերը նկատի են առել նաև Աստուածաշնչի հայերէն ընկալեալ թարգմանութիւնը: Ի տարբերութիւն Եւթաղի ջննական բնագրում առկայ աստուածաշնչեան հատուածների, յունարէն բնագրին համարժէք, նոյնական թարգմանութեան, No. 1947 ձեռագրի պատառիկ-պահպանակի (Ժ—ԺԱ դդ.) մի շարք սուրբգրային ընթերցումներ համեմալուում են Աստուածաշնչի հայերէն թարգմանութեանը (օրինակներ բերենք պահպանակ Եւթաղ զուգադրութեամբ). «ուխտին զոր ևլխտեցի» [Երեմիա ԼԱ. 33. (Ձոհրապեան հրատ.)— «ուխտին զոր արարի» (Եւթաղ, էջ 125 տ. 20), «Ինձ ի ժողովուրդ» (անդ ԼԱ. 33)— «Իմ ժողովուրդ» (անդ. տ. 24), «Ի մեծամեծս» (անդ ԼԱ. 34)— «ցմեծամեծս» (տ. 27), «զանարկնութիւն» (Սաղ. ԻԴ. 8)— «զանիրաւութիւն» (էջ 124 տ. 20), «Ես» (Սաղ. Բ 7)— «Եւ ես» (տ. 11):

Ստորև ներկայացնում ենք պատառիկ-պահպանակների նկարագրութիւնը.

No. 1529

Նիւթի մագաղաք: ՄեծՈՒԹԻԻՆ՝ 47.6×32.7*: ԳՐԱԴԱՇՏ՝ 38.1×24: ԳՐՈՒԹԻԻՆ՝ Երկսիւն: ՍԻԻՆԱԿՆԵՐԻ ՄԻՋՆԱՄԱՍ՝ 2: ՏՈՂ՝ 22: ՏՈՂԱՄԷՋ՝ 8մմ: ԳԾՈՒՄՆԵՐ՝ ճնշումով: ԼՈՒՍԱՆՑՔԸ՝ 5: ՎԵՐԻՆ՝ ԼՈՒՍԱՆՑՔԻ՝ 3,5, ՍՏՈՐԻՆ՝ 4,5: ԲԱՌԱՆՋԱՏՈՒՄ՝ չունի՝ բացառութեամբ նախադասութեան սկզբից և վերջից: ԳԻՐ՝ ուղղագիծ երկաթագիր: ՏԱՌ՝ 5մմ×

* Բոլոր գէպերում չափական միաւոր «սմ»-ը չենք նշում:

5մմ: ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ, ՏԵՂ՝ անյայտ: ԺԱՄԱՆԱԿ՝ Ժ—ԺԱ դդ.: ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ՝ հատուած՝ Ա. «Բովանդակութիւն աստուածային վկայութեանց [քրքոցն Պաղտի առաքելոյ]», ա՝ Եւ կրկնաբանեցան յայլ և յայլ քուղքսն... ր՝ Ի հռովմայեցոց քրքին վկայութիւնք (բովանդակութիւն):

Բ. Յառաջադիւր

Պահպանակը բաղկացած է 2 թերթից: Այն զոյացել է երբեմնի ձեռագրի երկուական ամբողջական թերթերի ստորին եզրերի կցումից, այսինքն՝ նախնական ձեռագրի 4 թերթերից (մեծութիւն՝ 23.3×16.4):

No. 1947

Նիւթի մագաղաք: ՄեծՈՒԹԻԻՆ՝ 25.5×21: ԳՐԱԴԱՇՏ՝ 20×18: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ՏՈՂ՝ 12: ՏՈՂԱՄԷՋ՝ 7մմ: ԼՈՒՍԱՆՑՔԻ՝ 2,2, ՍՏՈՐԻՆ ԼՈՒՍԱՆՑՔԻ՝ 6,2: ԳԾՈՒՄՆԵՐ՝ ճնշումով: ԲԱՌԱՆՋԱՏՈՒՄ՝ չունի՝ բացառութեամբ նախադասութիւնների սկզբից և վերջից: ԳԻՐ՝ ուղղագիծ երկաթագիր: ՏԱՌ՝ 5մմ×4մմ: ԳՐԻՉ՝ ՍՏԱՑՈՂ, ՏԵՂ՝ անյայտ: ԺԱՄԱՆԱԿ՝ Ժ—ԺԱ դդ.: ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ՝ հատուած «Բովանդակութիւն աստուածային զկայութեանց»-ից. [Յերբայեցոց քրքին վկայութիւնք (բովանդակութիւն)]:

ԵՆԹԱՆՈՐԱԳԻՐԸ՝ կարմիր մելանով:

Պահպանակը բաղկացած է 4 թերթից: Այն զոյացել է մագաղաթեայ թերթի վերին եզրի հատումից (չիք՝ 4—5 տող) և ընդլայնակի ծալումից: Նախկին մեծութիւնը՝ շուրջ 31,4×27:

No. 2087

Նիւթի մագաղաք: ՄեծՈՒԹԻԻՆ՝ 25.6×8: ԳՐԱԴԱՇՏ՝ 22,6×6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ՏՈՂ՝ 15: ՏՈՂԱՄԷՋ՝ 8մմ×1: ԼՈՒՍԱՆՑՔԻ՝ 2, վԵՐԻՆ ԼՈՒՍԱՆՑՔԻ՝ 3,5, ՍՏՈՐԻՆ ԼՈՒՍԱՆՑՔԻ՝ չիք (պակասում է շուրջ 8—9 տող): ԳԾՈՒՄՆԵՐ՝ ճնշումով: ԲԱՌԱՆՋԱՏՈՒՄ՝ չիք, բացառութեամբ նախադասութեան սկզբից և վերջից: ԳԻՐ՝ ուղղագիծ երկաթագիր: ՏԱՌ՝ 5մմ×4մմ: ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ, ՏԵՂ՝ անյայտ: ԺԱՄԱՆԱԿ՝ Ժ—Ժ դդ.: ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ՝ հատուած «Բովանդակութիւն աստուածեղէն վկայութեանց»-ից. ա՝ Ի Կորնթացոց յերկրորդ քրքին վկայութիւնք (միայն համարները) ր՝ Ի Կորնթացոց առաջին քրքին վկայութիւնք (բովանդակութիւն):

Պահպանակը բաղկացած է 4 թերթից: Այն զոյացել է մագաղաթեայ թերթի երկայնակի հատումից և ընդլայնակի ծալումից: Ենթելով ներկայ չափերից և բնագրային անհամեմատ խոշոր ընդհատումներից՝ պէտք է ենթադրել, որ մագաղաթեայ թերթը եղել է երկսիւն, որի մէկ սիւնը հատուելով յարմարեցուել է ձեռագրի չափերին: Այս հաշուով (22,6 × 6 + 22,6 × 6 + մօտ 1 սմ սիւնակով էջ) մագաղաթեայ թերթի նախկին չափերը եղել են շուրջ 45,2×13:

Պահպանակի մէկական թերթ սկզբից և վերջից օգտագործուել է որպէս կազմաստառ, որի հետեւանքով հնարաւոր չեղաւ ընթերցել պահպանակի Ա, Դ, Ե էջերը:

Գրչութեան վաղեմութիւնը փաստող

կարեւոր հանգամանք են պատառիկ-պահպանակների ուղղադրական, կէտադրական առանձնայատկութիւններն ու այստեղ կիրառուած պատուադրութիւնը:

Անձնանունների գրութեան մէջ միակ նկատուելի տարբերութիւնը Եսայի անունն No. 1529 ձեռագրի պահպանակում առկայ Իսայի ձևն է:

Մլքէ թագուհու Աւետարանի (902 թ.) և կիւրեղեան պատառիկների (Թ դդ.) նման այստեղ (No. 1947 ձեռագրի պահպանակ) ևս հրեշտակ բառը բերուած է ե-ի յապաւումով (հրշտակ): Լազարեան Աւետարանում (887 թ.) կիւրեղեան հատակոտորներում և Ազաթանգեղոսի կրկնագրում առկայ նախնիթաց ը տառի յապաւումը կիրառուել է No. 1529 ձեռագրի պահպանակում նմանապէս (առնրքեր):

Ուղղադրական յայտնի ձևերից զատ խնդրոյ առարկայ հատակոտորների հնութեան ցուցիչ է նաև նրանցում կենցաղագրող կէտադրական ձևը: Լազարեան Աւետարանի և կիւրեղեան պատառիկների նման այստեղ ևս վերջակէտի, ստորակէտի և բութի փոխարէն գրուում է միջակէտ: Ի տարբերութիւն Լազարեան Աւետարանի, կիւրեղեան պատառիկներում և մեր պատառիկ-պահպանակներում չափերտները բացակայում են: Բացի պատառի նշանից և միջակէտից, այլ «տիպի կէտադրական» և շեշտադրական նշաններ չկան ինչպէս կիւրեղեան պատառիկներում:

No. 2087

Բ փեղկ, Դա = էջ 111 տ. 3—9

Ի ՀԱՐԻՒՐՈՐԴԷՆՑՆԵՐՈՐԴԷՆՑ ԶԻՆԳԵՐՈՐԴԷՆՑ [ՄԱՂՄՈ]

ՄԷՆ Ա Բ
 Ի ՍՈՂՈՎՄՈՆԻՆՑ ԱՌԱԿԱՅ Բ ԷԸ
 ՅԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ Գ Ա, Գ, Ե
 ՅԵՐԵՄԻԱՆՑ ՄԱՐԳԱՐԷԷ ԱՅԳՆ Ա Դ
 Ի ԳԱՂԱՏԱՅԻՈՅ ԹՂԹԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՆԻՔ [ԺԱ ԺԱ]
 ՅԱՐԱՐԱՅՈՅ Դ (Ա Բ է Թ)
 Ի ՂԵՒՏԱՅԻՈՅ Ա Ժ
 ՅԵՐԿՐՈՐԴ ԱՒՐԻՆԱՅ Բ Գ Զ
 ՅԱՄԲԱԿՈՒՄԱՅ ՄԱՐԳԱՐԷԷ Ա Դ
 ՅԻՍԱԵԱՅ՝ ՄԱՐԳԱՐԷԷ Ա Ը

¹ Հարիւրերորդ տասներորդ
² Սողոմոնի

³ չիք՝ այդ
⁴ Յեսայեայ

Յեզեյիէլի եւ Յերկրորդ ԱրիւնՅ ԱՅՂ⁵
 ԱՅՂՈՒՍՏ Ա ժԱ
 ՅեփեՍՍՅՏՈՅ ԹՂԹԻՆ ՎԿԱՅՈՒԹԻԻՆՔ [2 2]
 ՅԱՐԱՐԱԾՈՅ Ա Ե
 / / / / / / / / / / / / /

⁵ նոյն Ա Ե փ]ս. սյդ

Բ փեղկ Դբ = էջ 111 տ. 15—112 տ. 3

/ / / / / / / / / / / / / / /
 [Յերկրորդ] ԱրիւնՅ 2 Գ Ի ԻԱ ԻԵ ԻԸ ԻԹ
 [Յերկրորդ] ՍԱՂՄՈՍԷՆ Ա Ա
 [ՅՈւթերորդ] ՍԱՂՄՈՍԷՆ Ա Ը
 [Ի քսաներորդէ յառաջին] ԲԳԻՆ ՍԱՂՄՈՍԷՆ Ա Թ
 [Յերեսներորդէ] ԵԻՑ ՅԻՆՆՆՆՆ ՍԱՂՄՈՍԷՆ Ա ժԹ
 [Ի քսաներորդ] ԴԻՆ ԶՈՐ(Ր)ՈՐԴՑ ՍԱՂՄՈՍԷՆ Ա Ե
 [Ի հարիւրերորդ] ԴԻՆ ՅԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՍԱՂՄՈՍԷՆ Ա 2
 / / / / / / / / / / / / / / /

⁷ Իններորդէ

⁸ Հորրորդէ

⁶ չիք՝ եւ,

Ա փեղկ Աբ = էջ 121 տ. 10—26

/ / / / / / / / / / / / / / /
 2 Թ ՅԻՆՆՆՆՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԷՆ. Տ[ը ճանաչէ]
 2 Է 2 Ձեռն շոնոր ՄԱՐԴԿԱՆՑ 2Ի ԵՆ ԸՆԴՈՒՆԱՅՆ
 Ը Է ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐԻՆԱՅ. ԲԱՐՁԷՔ 22ԱՐՆ Ի ՄԻ[ըս ձեւը]
 Թ Է ՄԷ (ԻԲ 21, 24).
 Ը Է ՅԱՐԱՐԱԾՈՅ. ԵՂԻՅԻՆ ԵՐԿՈՔԻՆ Ի ՄԱՐՄԻՆ [ԲԷ] (Բ 24).
 Թ Է ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐԻՆԱՅ. ՈՉ ԿԱՊԵՍՅԵՍ 23Ո[ուկ եղին]
 ԿԱԼՈՏԻՈՅ (ԻԵ 4).
 Ժ Թ ՅԵԼԻՅ. ՆՍՏԱԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՅՈՒՏԵԼ Ե[ւ յմպել եւ յա]
 ԲԵԱՆ Ի ԽԱՂԱԼ (ԼԲ 6).
 Ժ ԺԱ Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԷՆ. ՏԵԱՌՆ Է ԵՐ[կեր արեւ]
 ԻԻՐՈՎ (ԺԳ 1).
 ԺԲ ԺԱ Ի ՄԱՏԹԷԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ. ՏՐ ՅԻՍՈՒՍ Ի ԳԻՇԵՐԻ[ն յորում]
 ՄԱՏԷՐ ԱՌ ՀԱՅ ԳՈ ՀԱՅԱԻ ԵԲԵԿ ԵԻ ԱՍԷ. ԱՅՍ Է
 ՄԱՐՄԻՆ ԻՄ ՈՐ ՎԱՍՆ 2ԵՐ 2ԱՅՍ ԱՐԱՐԷՔ [իմ յիշա]
 ՏԱԿ. ՆՈՅՆՊԷՍ ԵԻ 2ԲԱԺԱԿՆ ՅԵՏ ՅԸՆԹՐԵ[ացն]
 / / / / / / / / / / / / / / /
 / / / / / / / / / / / / / / /
 [ԺԳ ԺԲ ՅԵՍԱՅ]ԱՅ. ՅԱԻՏԱՐ ԼԵԶՈՒՍ ԵԻ Ի ՇՐԹՈՒՆՍ ԱԻՏԱ
 [բաւտիս իս]ԻՍԵՅԱՅՅ ԸՆԴ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ԸՆԴ ԱՅՍ
 [միկ սակա]ՅՆ ԵԻ ԱՅՆՊԷՍ ՈՉ ԼՈՒԻՅԵՆ ԻՆՁ ԱՍԷ ՏՐ (ԻԸ 11).
 ԺԳ ԺԳ [Ի զակոնաց] Ի ԵԻ Ի ՀԻՆ ԱՌԱՍՊԵԼԷ. ԿԵՐԻՅՈՒՔ¹⁰ ԱՐԲՅՈՒՔ
 [քանդի] ՎԱՂԻԻ ՄԵՌԱՆԻՄՔ.
 ԺԵ ԺԳ [ՄԵՆԱՆԵՐ]Ի ԵՐԱԳԱԳՐԻ¹¹ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՆ. ԱՊԱԿԱ
 / / / / / / / / / / / / / / /

⁹ Իմաստնոց

¹⁰ Կերկրոց եւ

¹¹ Կրկազրի: Ի զէսզ «Երազազրի» ընթեր-

ցունն ունի նաև Վիեննայի Միլիթարեան մա-
տենագրարանի 1368—75 թթ. ընդօրինակուած
No. 55 (Ա) ձեռագիրը:

No. 1529

Բ փեղկ Դբ = էջ 113 տ. 11—114 տ. 6

ԵԻ ԿՐԿՆԱԲԱՆԵ
 ՅԱՆ ՅԱՅԼ ԵԻ ՅԱՅԼ
 ԹՈՒՂԹՍՆ¹² ՈՐՊԷՍ¹³
 Ի ՆԵՐԲՈ ԿԱՐԳԵԱԼ ԵՂԵՆ¹⁴
 ՎԿԱՅՈՒԹԻՆՔ¹⁵ ԵԻ ԵՆ
 ԱՅՍՈՒԲԻԿ
 ՅԱՐԱՐԱԾՈՅ Գ
 ՂԵԻՏԱՅԻՈՅՆ Ա¹⁶
 ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐԻ
 ՆԱՅ Բ
 ՅԱՌԱՋԻՆ ԹԱԳԱԻ
 ՈՐՈՒԹԵՆԷ Ա
 ՅԱՌԱԿԱՅ Ա
 ՅԱՄԲԱԿՈՒՄԱՅ ՅԵՐ
 ԵՔԿԻՆ Ա¹⁷
 ՅԻՍԱՅԱՅ Ա
 ՅԵԶԵԿԻԷԼԷ Բ¹⁸
 ԵԻ ԳՐԵՅԱՆ ՅԱՅԼ
 ԵԻ ՅԱՅԼ ԲԱՂԱԲԱՅ
 ԹՈՒՂԹՐՆ ԶՈՐԵՔ
 ՏԱՍԱՆԵՔԻՆ¹⁹ ՈՐ
 ՊԷՍ Ի²⁰ ՆԵՐԲՈՅ ԻՍԿ ԿԱՐ
 ԳԵԱԼ ԵՆ

Ի ԿՈՐՆԹՈՍԷ Ա
 ՀՈՂՎՄԱՅԵՑԻՈՅՆ Ա²¹
 Ի ՓԻԼԻՊԵԱ Բ²²
 ԱՌ ԿՈՐԸՆԹԱՅ
 ԻՍԿ ԱՌԱՋԻՆ Բ
 ԵԻ ԱՌ ՆՈՍԻՆ ԵՐԿ
 ՐՈՐԴՆ Գ²³
 Ի ՀՈՂՎՄԷՅ²⁴ 2
 ԱՌ ԳԱՂԱՏԱՅԻՍ Գ²⁵
 ԱՌ ԵՓԵՍՍԱՅԻՍ Ե
 ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ 2
 ԱՌ ԿՈՂՈՍԱՅԻՍ Է
 ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ
 ԵՐԿՐՈՐԴՆ ԺԲ
 ԱՌ ՓԻԼԻՄՈՎԷ
 ԵԻ ԱՌ ԻԻՐՍՆ ԺԳ
 ՅԱԹԵՆԱՅ Բ
 ԱՌ ԹԵՍՍԱԼՈՎԷՆԻ
 ԿԵՑԻՄՆ ԱՌԱՋԻՆ Ը
 ԵԻ ԱՌ ՆՈՍԻՆ ԵՐ
 ԿՐՈՐԴՆ Թ
 ՅԻՏԱԼԻԱՅ Ա

¹² Թուղթս

¹³ որ

¹⁴ Են ժԱ փ]ս. եղեն

¹⁵ չիք՝ վկայութիւնք

¹⁶ Ղեւտացոց

¹⁷ Ա երկրիին

¹⁸ Ա — Տունք ՀԸ

¹⁹ Թուղթք չորեքտասանք

²⁰ Եւ Ի

²¹ մի՛ ա հոովմայեցուցն

²² փիլիպպեա երկու Բ

²³ կորնթացիս առաջինն. Գ առ նոսին երկ-

րորդն

²⁴ Ի Հոովմայ

²⁵ Գ առ զաղատացիս. բոլոր դէպքերում
քղբերը քիւր մատնանշող տառանիշը դր-

ուած է սկզբում:

Բ փեղկ Դա = էջ 114 տ. 6—115 տ. 10

ԱՌ ԵՐԱՅԵՑԻՍ Ժ
 Ի ԼԱԻՈՂԻԿԵԱ ՓՈ
 ԻԻԳԱՅԻՈՅ Ա
 ԱՌ ՏԻՄՈՎԹԵՈՍ
 ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹՆ
 ՈՐ ՅԵՓԵՍՈՍՆ ԷՐ ԺԱ
 Ի ՆԻԿԵՊՈԼԻՍԷՆ ՄԱԿ
 ԵԴՈՎՆԱՅԻՈՅ Ա
 ԱՌ ՏԻՏՈՍԻ ՈՐ Ի
 ԿՐԵՏԷՍ²⁶ ԿՂՁԻՈՋ

ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐ
 ՈՐԴՆ ՈՐ ԱՌ ՆՈՅՆ
 ԵՐԿՐՈՐԴՆ
 ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐ
 ՈՐԴՆ ՈՐ ԱՌ ՏԻ
 ՏՈՍ.
 ԵԻ Ի ՊԱԻՂՈՍԻ ԵԻ
 Ի ՍՈՍԹԵՆԻ ԴԻՄԱՅ
 ԹՈՒՂԹ Ա
 ԵՐԿՐՈՐԴՆ³¹ ՈՐ Ա

²⁶ Հ. Ա. Վարդանեանը «Կրեւէ»-ն նախ-
ընտրում է ձեռագրերով աւանդուած «Կրե-
ւէս» ընթերցումից՝ վերջինս համարելով

«Ինքնահնար» ձև, որ խորթ է հայերէն դա-
սական թարգմանութիւններին. անդ, էջ 114,
ծանօթ. 1:

³¹ չիք՝ երկրորդն

որ Առնէ ԶԲԱՂՅՐ
 ՈՒԹԻԻՆ ՈՉ ՈՔ Է ՄԻՆ
 ՉԵՒ Ի ՄԻ ԳԵՐԵՉՄԱ.
 ՆՔ⁶⁵ ԲԱՅԷ ԿՈԿՈՐԴ ՆՈ
 ՅԱ ԼԵԶՈՒԱԻՔ ԻԻՐԵԱՆՑ
 ՆԵՆԳԱԻՈՐՔ ԵՂԵՆ
 ԹՈՅՆՔ ԻԺԻՑ Ի ՆԵՐ
 ՔՈՅ ՇՐԹԱՆՑ ՆՈՅԱ.
 ՈՐՈՅ ԲԵՐԱՆՔ ԱՆԻ
 ԾԻԻՔ ԵՒ ԴԱՌՆՈՒԹԵԱՄԲ ԼԻԵՆ
 (ԺԳ 1, ԾԲ 3).

Ե Բ ՅԻՍԱՅԱ.⁶⁶ ԵՐԱԳ ԵՆ

ՐՈՒԹԻԻՆ (ԺԵ 6).
 Ե Գ ՅԵՐԵՄՆԵՐՈՐԴ
 ԱՌԱՋՆԵՐՈՐԴ⁶⁸
 ՍԱՂՄՈՍԷՆ ԵՐ[անի]
 ՈՐՈՅ ԹՈՂԱՆ ԱՆԱ.
 ԻՐԷՆՈՒԹԻԻՆՔ ԵՒ⁶⁹ ԾԱ.
 ԾԿԵՑԱՆ ՄԵՂՔ ԻԻ
 ՐԵԱՆՑ ԵՐԱՆԻ ԱՌՆ
 ՈՐՈՒՄ ՈՉ ՀԱՄԱՐ
 ԵՍՅԻ ՏՐ ՉՄԵՂՍ
 ՆՈՐԱ. (ԼԱ 1—2).

⁶⁵ դերեզման
⁶⁶ Յեսայեսայ

⁶⁸ յերեսներորդէ առաջնեբորդէ
⁶⁹ եւ որոց

Բ փեղկ Գ Բ = Էջ 118 տ. 23—119 տ. 14

ԱՆԴ ԿՈՉԵՍՅԻՆ
 ՆՈՔԱ ՈՐԴԻՔ ԱՅ
 ԿԵՆԴԱՆՆՈՅ
 ԺԸ Գ ՅԻՍԱՅԱ. ԹԵ Ի
 ՅԷ ԹԻԻ ՈՐԴԻՈՅՆ
 ԻՂԻ ԻԲՐԵԻ ՉԱՒԱՉ
 ԾՈՎՈՒ ՍԱԿԱԻ ԻՆՉ
 ՄՆԱՅՈՐԴՔ ՄՆԱՍՑ
 ԵՆ ՉԻ ԲԱՆ ՄԻ ՀԱԿԻՐ
 Ճ ԵՒ ՀԱՄԱՌԱՏ⁷⁰ ԱՐ
 ԱՍՅԷ ՏՐ Ի ՎԵՐԱՅ ԵՐԿՐԻ

ԻԱ Ա ՅԵԶԵԿԻԷԼԷ. ԵՒ ՅԵՐ
 ԿՐՈՐԴ ԱԻՐԻՆԱՅ ՆՈՅՆ.
 ՈՐ ԱՐԱՍՅԷ ՉԱՅՄ⁷³ ԿԵՑ
 ՅԷ Ի ՍՈՍԻՆ⁷⁴ (Ի 11, Դ 1).
 ԻԲ Ա ՅԵՐԿՐՈՐԴ ԱԻՐԻՆԱՅ.
 ՄԻ ԱՍԵՐ Ի ՍՐՏԻ ՔՈՒ
 Մ ՈՎ ԵԼԱՆԻՅԷ ՅԵՐ
 ԿԻՆՍ ԿԱՄ ՈՎ ԻՉԱՆԻ
 ՅԷ ՅԱՆԴՈՒՆԴՍ (Լ 12).
 ԻԳ Բ ՅԵՐԿՐՈՐԴ ԱԻՐԻՆ[ա]Յ.
 ՄԵՐՉ Է ԲԱՆՆ Ի ԲԵՐ
 ԱՆ ՔՈ ԵՒ Ի ՍՐՏԻ ՔՈՒՄԷ⁷⁵

(Ժ 22). (Լ 14).

ԺԹ Դ ՅԻՍԱՅԱՅ. ԹԵ ՈՉ ՏՆ
 ՉԱՒՈՒԹԵԱՆՑ ԹՈՂ
 ԵԱԼ ԷՐ ՄԵՉ ՉԱՒԱԿ ԻԲ
 ՐԵԻ ՉՄ[որում] ԼԻՆԷ
 ԱՔ ԵՒ ԳՈՄՈՐՈՅ⁷¹ ՆԸ
 ՄԱՆԵԱՔ (Ա 9).
 Ի Ե ՅԻՍԱՅԱ. ԱՀԱԻԱՍ
 ԻԿ ԴՆԵՄ Ի ՍԻՈՎՆ ՔԱ
 Ր ԳԱՅԹԱԳՂՈՒԹԵԱՆ
 ԵՒ ՎԵՄ ԳԼՈՐՄԱՆ
 ԵՒ ՈՐ ՀԱԻԱՏԱ Ի ՆԱ⁷² ՄԻ
 ԱՄԱՉԵՍՅԷ (Ը 14).

ԻԴ Ա Ի ՅՈՎԵԼԱՅ ԱՄԵՆԱՅՆ
 ՈՐ ԿԱՐԴԱՍՅԵ ՉԱՆ
 ՈՒՆ ՏՆ ԿԵՑՅԷ (Բ 22).
 ԻԵ Ա Ի ՆԱԻՈՒՄԱՅ ԵՒ ՅԻՍ
 ԱՅԱ ՈՐՊԷՄ⁷⁶ ՉԻ ԳԵՂ
 ԵՑԻԿ ԵՆ ՈՏՔ ԱԻԵՏ
 ԱՐԱՆՉԱՅՆ ԲԱՐՈՒԹԵԱՆ
 (Ա 15, ԾԲ 7).
 ԻՉ Չ ՅԻՍԱՅԱ. ՏՐ Ո ՀԱԻ
 ԱՏԱՅ ԼՐՈՅ ՄԵՐՈՒՄ (ԾԳ 1).
 ԻԷ Ե Ի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՈՒԹ⁷⁷

⁷⁰ Համառաւտ արդարութեամբ, զբանն հա-
 կիրճ...
⁷¹ դոմորոց
⁷² Ի նա հաւատասցէ

⁷³ ոք զայն
⁷⁴ նոսին
⁷⁵ քուժ
⁷⁶ իբրեւ
⁷⁷ յուժեւտասանեբորդ

Բ փեղկ Գ ա = Էջ 119 տ. 14—120 տ. 1

ԵՐՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԷՆ.
 ԸՆԴ ԱՄԵՆԱՅՆ ԵՐ
 ԿԻՐ ԵԼ ԲԱՐԲԱՌ ՆՈ
 ՅԱ ԵՒ Ի⁷⁸ ԾԱԳՍ ՏԻԵ
 ՉԵՐԱՅ ԲԱՆՔ ՆՈՅԱ. (ԺԸ 5).
 ԻԸ Գ ՅԵՐԿՐՈՐԴ ԱԻՐԻ
 ՆԱՅ. ԵՒ ՆԱԽԱՆՉԵ
 ՅՈՒՅԻՆ ՉՉԵՉ ՈՉ Ի
 ՆՉ ԺՈՂՈՎՐԴՈՎ⁷⁹ ԵՒ
 ԱՉԳԱԻ ԱՆՄՏԱԻ ՉԿ
 ԾԵՑՈՒՅԻՑ ՉՉԵՉ (Բ 21).
 ԽԹ Է ՅԻՍԱՅԱՅ. ԳՏԱՅ
 ԱՅՆՈՅԻԿ ՈՐ ՉԻՄՆ⁸⁰
 ՈՉ ԽՆԴՐԷԻՆ ՅԱՅ
 ՏՆԻ ԵՂԵ ԱՅՆՈՅԻ
 Կ ՈՐ ՉԻՆԷՆ⁸¹ ՈՉ [Հ]ԱՐ
 ՅԱՆԷԻՆ (ԿԵ 1).
 Լ Ը ՅԻՍԱՅԱՅ. ՉԱԻՐ
 ՀԱՆԱՊԱՉ ՉԳԵ
 ՅԻ ՉՉԵՌՍ⁸² ԻՄ ԱՌ
 ԺՈՂՈՎՈՐԴՆ ԱՆ
 ՀԱԻԱՆ ԵՒ ՀԱԿԱՌԱ
 ԿՈՂ (ԿԵ 2).

ԼԱ Ա ՅԵՐՐՈՐԴ ԹԱ
 ԳԱԻՈՐՈՒԹԵՆԷ⁸³. ՏՐ
 ՉՄԱՐԳԱՐԷՍ ՔՈ ԿՈ
 ՏՈՐԵՅԻՆ ԵՒ ՉՍԵ
 ՂԱՆՍ ՔՈ ԿՈՐԾԱՆ
 ԵՑԻՆ ԵՍ ՄՆԱՅԻ
 ՄԻԱՅՆ ԵՒ ԽՆԴՐԵՆ
 ՉԱՆՉՆ ԻՄ (ԺԹ 10).
 ԼԲ Բ ՅԵՐՐՈՐԴ ԹԱԳԱԻ
 ՈՐՈՒԹԵՆԷ⁸⁴. ԹՈՂԻ
 ԵՍ ԻՆՉ ԵՒԹՆ ՀԱՉ
 ԱՐ ԱՅՐ ՈՐ ՈՉ ԿՐԿ
 ՆԵՅԻՆ ԾՈՒՆՐ ԲԱ
 ՀԱՂՈՒ (ԺԹ 18).
 ԼԳ Թ ՅԻՍԱՅԱ. ՅԵՏ ՆՈ
 ՅԱՅ ԱՄ ՈԳԻ⁸⁵ ՅԻՄԱՐՈ
 ԻԹԵԱՆ ԱՉ[ա] ՈՐՈՎՔ
 ՈՉ ՏԵՍԱՆԻՅԵՆ ԵՒ
 ԱԿԱՆՉՍ ՈՐՈՎՔ ՈՉ
 ԼՈՒԻՅԵՆ ՄԻՆՉԵԻ
 ՅԱՅՍԱԻՐ ԺԱՄԱՆԱԿԻ (Չ 9).
 ԼԴ Չ Ի ՎԱԹՆԵՐՈՐԴ
 / / / / / / / / / /

⁷⁸ ընդ փ]ս. Ի
⁷⁹ Ժողովրդեամբ
⁸⁰ զիս
⁸¹ զիս

⁸² զձեռն
⁸³ Թագաւորութենէն
⁸⁴ Թագաւորութենէն
⁸⁵ հոգի

No. 1947

Բ փեղկ Գ ա = Էջ 124 տ. 10—23
 ՅԵՐՐԱՅԵՅԻՈՅ⁸⁶ ԹՂԹԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՆՔ Լ [Հ]

Ա ԺԵ ՅԵՐԿՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԷՆ. ՈՐԴԻ ԻՄ ԵՍ ԴՈՒ ԵՍ⁸⁷
 ԱՅՍԱԻՐ ԾՆԱՅ ՉՔԵՉ (Բ 7).
 [Բ Բ] ՅԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵՆԷ. ԵՍ ԵՂԵՑ ՆՄԱ
 Ի ՀԱՅՐ ԵՒ ՆԱ ԵՂԻՑԻ ԻՆՉ ՅՈՐԴԻ (Է 14).
 [Գ ԺԲ] ՅԵՐԿՐՈՐԴ ԱԻՐԻՆԱՅ. ԵՐԿԻՐ ՊԱԳՅԵՆ ՆՄԱ
 ԱՄԵՆԱՅՆ ՀՐԵՇՏԱԿՔ ԱՅ (ԼԲ 43).
 [Գ ԺՁ] Ի ՀԱՐԻԻՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԷՆ. Ո ԱՐԱՐ Չ
 ՀՐՇՏԱԿՍ⁸⁸ ԻԻՐ ՀՈԳԻՍ ԵՒ ՉՊԱՇՏՈ⁸⁹ ՆԵԱՅՍ ԻԻՐ
 Ի ԲՈՅ ՀՐՈՅ (ՃԳ 4).
 [Ե ԺԷ] Ի քառասնեբորդ չորբորդ սաղմոսէն. աթոռ քո Աճ] ՅԱԻԻ
 [տեանս] ՅԱԻԻՏԵՆԻՑ ԳԱԻԱՉԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ԳԱԻԱՉԱՆ
 ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՔՈ⁹⁰. ՍԻՐԵՅԵՐ ՉԱՐԴԱՐՈՒԹԻՆ

⁸⁶ Հեբրայեցւոց
⁸⁷ եւ ես

⁸⁸ զհրեշտակս
⁸⁹ զպաշտանեկայս (?) (ծանօթ. ՀԱ.)
⁹⁰ քոյ

